## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Սույն նախագծով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ Աշտարակ քաղաքի Ներսես Աշտարակեցու փողոցի ժայռի փլուզման հնարավորությունը կանխելու նպատակով:
Տեղանքը ունի բավականին բարդ ռելեֆ, տեղանքի բարձրադիր նիշերի տարբերությունը, ժայռի գագաթին մոտ տարածքում 2 մ հորիզոնական ուղղությամբ, միմյանցից կազմում է 2.0 մ-ից մինչև 8.0 մ: Ժայռի գագաթից մինչև Ն. Աշտարակեցու փողոցի եզրամաս հորիզոնական 18-ից 20.0 մ հեռավորության վրա ուղղաձիգ նիշերի տարբերությունը կազմում է մինչև 10.0 մ: Նախատեսվում է կառուցել երկաթբետոնե հենապատ գոյություն ունեցող ժայռի փլուզման հնարավորությունը կանխելու նպատակով:
Գնահատելով տեղագրական հանույթի և տարածքում ինժեներա- երկրաբանական նախկին ուսումնասիրությունների տվյալները, նախագծով նախատեսվում է երկաթ բետոնե հենապատի հիմքը տեղադրել 5.60 ուղղաձիգ պայմանական նիշի վրա, որտեղ առկա է բազալտե քարաբե կորային գրունտներ կավավազային լցանյութով, որոնց հզորությունը հասնում է ըստ տվյալների մինչև 6.0 մ:
Հենապատի երկարությունը կազմում է՝ 0.4 + 3.2 + 0.4 = 4.0 մ.:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

| N-N | ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԹԵՐԹ |
|---|---|---|
| 1. | Նախնական տվյալներ՝ բացատրագիր | ՃՇ - 1 |
| 2. | ՏԵՂԱՆՔԻ ՈՒՂՂԱՁԻԳ ՀԱՏԱԿԱԳԻԾ՝ Մ 1:100 | ՃՇ - 2 |
| 3. | ՀԵՆԱՊԱՏԻ ԿՏՐՎԱԾՔ՝ 1-1.<br>կտրվածք 1-1, Ամրանի և բետոնի մասնագիր ն/բ մեկ էլեմենտի համար, Ծանոթություն, Հենապատի կոնստրուկցիան, Ամրանների էսքիզները | ՃՇ - 3 |

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՀԵՏԵՎՅԱԼ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ.

1. Բնակելի հասարակական և արտադրական ոլորտ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՀԵՏԵՎՅԱԼ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ.

1. Ինժեներ -շինարար առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1. Էկսկավատոր
2. Բուլդոզեր
3. Բետոնախառնիչ

Համաձայնեցված է՝

Աշտարակի քաղաքապետ Ա. Անտոնյան

| | | |
|---|---|---|
| Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու փողոցի ժայռի փլուզման հնարավորությունը կանխելու նպատակով հենապատի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | | |
| Նախագծեց: Ս. Զուբով | | |
| ՆԳՃ: Հ. Հովսեփյան | | |
| ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱ - ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ | ՓՈՒԼ: ԱՆ | ԹԵՐԹ: ՃՇ - 1 ; ԹԵՐԹԵՐ: 3 |
| Նախնական տվյալներ՝ բացատրագիր | «ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | |